

5.9. Երկրաբանահետախուզական աշխատանքները 2000 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տրամադրած ամփոփ տվյալների, 2000թ. 4-րդ եռամսյակում երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 23.2 մլն. դրամ 1999թ. նույն ժամանակահատվածի 64.4 մլն. դրամի դիմաց: Այդ աշխատանքների 40.8%-ը կամ 9.5 մլն. դրամը կատարվել է պետական բյուջեի միջոցների հաշվին (1999թ.՝ 73.4% կամ 47.3 մլն դրամ), 59.2%-ը կամ 13.7 մլն. դրամը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին (1999թ.՝ 26.6% կամ 17.1մլն. դրամ):

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալը

(մլն. դրամ)

	2000թ. 4-րդ եռամսյակում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալը	2000թ. 4-րդ եռամսյակի աճը կամ նվազումը 2000թ. 3-րդ եռամսյակի համեմատ (նվազումը «-» նշանով), %
Երկրաբանահետախուզական աշխատանքներ, ընդամենը	23.2	- 23.7
դրանցից ավելացած արժեքի հարկը	3.9	- 12.2
այդ թվում՝		
պետական բյուջեի միջոցների հաշվին	9.5	- 66.2
դրանցից ավելացած արժեքի հարկը	1.6	- 60.6
արտաբյուջետային պայմանագրերով	13.7	5.8 անգամ
դրանցից ավելացած արժեքի հարկը	2.3	5.8 անգամ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալն ըստ 2000թ. եռամսյակների

	I	II	III	IV
Ընդամենը	-	19.5	30.4	23.2
դրանցից ավելացած արժեքի հարկը	-	3.2	4.4	3.9
այդ թվում՝				
պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդամենը	-	-	28.0	9.5
դրանցից ավելացած արժեքի հարկը	-	-	4.0	1.6
արտաբյուջետային պայմանագրերով, ընդամենը	-	19.5	2.4	13.7
դրանցից ավելացած արժեքի հարկը	-	3.2	0.4	2.3

2000թ. հանրապետությունում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 73.1 մլն. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 274.7 մլն. դրամի դիմաց: Այդ աշխատանքների 51.3%-ը կամ 37.5 մլն. դրամը կատարվել է պետական բյուջեից նախատեսված հատկացումների հաշվին (1999թ. 36.9%-ի կամ 101.3 մլն. դրամի դիմաց), 48.7%-ը կամ 35.6 մլն. դրամը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին (1999թ. 63.1%-ի կամ 173.4 մլն. դրամի դիմաց):

2000թ. կատարվել է 984 մ մեխանիկական հորատում, որից 812 մ-ը՝ սյունակային, 172 մ-ը՝ ոչ սյունակային: Մեխանիկական հորատման 45.3%-ը կատարվել է պետբյուջեի, 54.7%-ը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին: Կատարվել են 19 մ հորիզոնական և 20 մ ուղղահայաց լեռնային ստորգետնյա փորվածքներ, բոլորն էլ՝ պետբյուջեի հաշվին: Լեռնային վերգետնյա փորվածքներից 1.2 հազ. խոր. մ-ը առուների, խրամատների փորվածքներն են և մաքրման աշխատանքները, բոլորն էլ՝ պետբյուջեի հաշվին: Մինչև 5 մ խորության հետախուզահորերը զբաղեցրել են 137 զծմ (27%-ը՝ պետբյուջեի, 73%-ը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին):

Պետբյուջեի հաշվին 22 քառ. կմ-ի վրա կատարվել է երկրաֆիզիկական հանույթ՝ էլեկտրահետախուզման մեթոդով, 19 քառ. կմ-ի վրա՝ 750 մմուշ երկրաքիմիական հանույթ, իսկ արտաբյուջետային միջոցների հաշվին՝ 0.06 քառ.կմ-ի վրա՝ երկրաբանական հանույթ, 1 քառ.կմ-ի վրա՝ հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հանույթ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱՎԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Տարածաշրջանային (ռեզիդնալ) աշխատանքների ծավալը կազմել է 4324.4 հազ. դրամ (95.3%-ը՝ պետբյուջեի հաշվին), որից 870.5 հազ. դրամը՝ երկրաբանական, 770.8 հազ. դրամը՝ հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական, 2683.1 հազ. դրամը՝ երկրաֆիզիկական բնույթի աշխատանքներ են:

Տեղադրվել են 125.0 հազ. դրամի ժամանակավոր շինություններ (պետբյուջեի հաշվին), կատարվել են 6056.3 հազ. դրամի տրանսպորտային /անձնակազմի և բեռների տեղափոխում/ ծախսեր (67.4%-ը՝ պետբյուջեի հաշվին), 2570.4 հազ. դրամի լաբորատոր (11.3%), 6318.0 հազ. դրամի աշխատանոցային՝ տեղերում քարտեզների կազմում, ձևավորում և այլն, (60.5%) և 12305.1 հազ. դրամի այլ բնույթի աշխատանքներ (51.0%):

2000թ. ընթացքում ավարտվել է (վերջնական հորատվել է) 29 հորատանցք (1999թ. 351-ի դիմաց), որոնցից 22-ը՝ մինչև 25 մ, 5-ը՝ 25-100 մ և 2-ը՝ 101-200 մ խորությամբ: Ավարտված հորատանցքերի գումարային խորությունը կազմել է 984 մ (1999թ. 4572 մ-ի դիմաց), իսկ միջին խորությունը՝ 34 մ, նախորդ տարվա 13 մ-ի դիմաց:

Երկրաբանահետախուզական աշխատանքներն ըստ բնագավառների և աշխատափուլերի

Բնագավառը	Փաստացի կատարված աշխատանքների ծավալը	ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ըստ փուլերի			
			որոնողական	որոնողա-գնահատողական	նախնական հետախուզական	մանրակրկիտ հետախուզական
Երկրաբանահետախուզական աշխատանքներ, ընդամենը	պետբյուջեի հաշվին	37.5	20.6	11.0	4.0	1.9
	արտաբյուջետային միջոցների հաշվին	35.6	9.2	5.0	-	21.4
այդ թվում՝ գումարավոր մետաղներ	պետբյուջեի հաշվին	5.0	-	5.0	-	-
	արտաբյուջետային միջոցների հաշվին	-	-	-	-	-
ազնիվ մետաղներ	պետբյուջեի հաշվին	10.9	5.0	-	4.0	1.9
	արտաբյուջետային միջոցների հաշվին	5.0	-	5.0	-	-
ոչ մետաղներ	պետբյուջեի հաշվին	6.6	0.6	6.0	-	-
	արտաբյուջետային միջոցների հաշվին	17.5	-	-	-	17.5
տարածաշրջանային (ռեզիդնալ) երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրո-երկրաբանական աշխատանքներ	պետբյուջեի հաշվին	15.0	15.0	-	-	-
	արտաբյուջետային միջոցների հաշվին	13.1	9.2	-	-	3.9